## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 122

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 15 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 22-ը հոկտեմբերի 2020 թվականի թիվ 15 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 22 հոկտեմբերի 2020 թվականի թիվ 15 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին,

2. Արենի համայնքի ավագանու 2020 թվականի թիվ 98, թիվ 99-ն և թիվ 101 որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելուն համաձայնություն տալու մասին,

3. ՀՀ Վայոց ձորի մարզպետի 21.10.2020 թվականի թիվ 01/13,2/6802-2020 գրությունը քննարկելու և Արենի համայնքի ավագանու 11.10.2020 թվականի թիվ 117 որոշումը անվավեր ճանաչելուն համաձայնություն տալու մասին,

4.Խաչիկ համայնքի ավագանու 08.12.2011թ. թիվ 29 որոշման մեջ փոփոխություններ կատարելուն համաձայնություն տալու մասին

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԽՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 123

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 18.09.2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 98, ԹԻՎ 99 ԵՎ ԹԻՎ 101 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով ՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Տալ համաձայնություն.

1. Արենի համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 18-ի «Արենի համայնքի բնակիչներից ստացված դիմումները քննարկելու և դրամական աջակցություն տրամադրելուն համաձայնություն տալու մասին» թիվ 98 որոշման իրավական հիմքերի մեջ. «18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով» բառերից և թվերից հետո ավելացնել «և հիմք ընդունելով Արենի համայնքի Զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության, բարեկավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, նորածին երեխա ունեցող ընտանիքներին, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական բարելավման վերաբերյալ դիմումները քննող հանձնաժողովի 25.09.2020 թվականի թիվ 13 նիստի առաջին և երկրորդ որոշումները» բառերը և թվերը,

2. Արենի համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 18-ի «Արենի համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի եկամտային մասում ավելացում և ծախսային մասում հոդվածային վերաբաշխումներ կատարելուն համաձայնություն տալու մասին» թիվ 99-Ն որոշման իրավական հիմքերի հղման մեջ ««Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով» բառերից և թվերից հետո ավելացնել, 29-րդ հոդվածի 5-րդ մաս բառերը և թվերը:

3. Արենի համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 18 -ի «Արենի համայնքի սեփականություն հանդիսացող ՄԱԶ մակնիշի վակումային և ԿԱՄԱԶ մակնիշի ինքնաթափ ավտոմեքենաների վարորդների համար վարձատրության չափ և ավտոմեքենաներով մատուցված ծառայությունների դիմաց սակագներ սահմանելու մասին» թիվ 101 որոշման մեջ կատարել հետյալ լրացումները

ա) որոշման իրավական հիմքերի մեջ ««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդկետի պահանջով» բառերից և թվերից հետո ավելացնել «և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով» բառերը և թվերը

բ) որոշման համարից հետո ավելացնել «Ն» տառը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱՆՏՈՆՅԱՆ ԾԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒՐԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 124

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 11.10.2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 117 ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 38-րդ հոդվածի պահանջով, և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզի մարզպետ Արարատ Գրիգորյանի 21.10.2020 թվականի թիվ 01/13,2/6802-2020 գրությունը Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Անվավեր ճանաչել Արենի համայնքի ավագանու 11.10. 2020 թվականի «Հայաստանի հանրապետությունում 2020 թվականի սեպտեմբերի 27-ին հայտարարված ռազմական դրության ժամանակ, մարտական գործողությունների հետևանքով զոհված և վիրավորված զինծառայողների ընտանիքներին միանվագ դրամական աջակցություն ցուցաբերելուն համաձայնություն տալու և գումարի չափ սահմանելու մասին» թիվ 117 որոշումը:

Կողմ -0 Դեմ -8 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՐԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 125

## ԽԱՉԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 08.12.2011Թ. ԹԻՎ 29 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Վայոց ձոր ֆրուկտ» ՍՊԸ-ի կողմից 19.10.2020թ-ին ներկայացված գրությունը և Արենիի համայնքապետարանի կողմից կատարված ուսումնասիրությունը.

Պարզեց որ՝ 2012թ. նոյեմբերի 6-ի լեռնահատկացման թիվ ԼՎ-048 ակտի համաձայն /16.11.2015թ. փոփոխությամբ / «Վայոց ձոր ֆրուկտ ՍՊԸ-ին» տրամադրվել է 3.42165 հա հողամաս, որից

- Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 2.41898 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության (ծածկագիր՝ 10-025-0106-, գործառնական նշանակությունը՝ ընդերքօգտագործման) է,
- Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.93458 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիր՝ 10-025-0106-, գործառնական նշանակությունը՝ արոտավայր) է,
- Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.06809 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիր՝ 10-025-0106-, գործառնական նշանակությունը՝ այլ) է:

Հաշվի առնելով, որ 0.93458 հա և 0.06809 հա հողամասերը կարող են տրամադրվել դրանց նշանակության համապատասխան փոփոխությունից հետո, ուստի դրանք վարձակալությամբ տրամադրելու հարցին հնարավոր է անդրադառնալ վերոնշյալ փոփոխություններից հետո:

Ղեկավարվելով «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասով, Հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով, 48-րդ հոդվածի 4-րդ մասով, ՀՀ Կառավարության 12 ապրիլի 2001 թվականի թիվ 286 որոշման 44-րդ կետի Ը ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով Արենի համայնքի ավագանին *որոշում է.*

1. Խաչիկ համայնքի ավագանու 08.12.2011թ. թիվ 29 որոշման մեջ բոլոր տեղերում «3.6124 հա» արտահայտությունը փոխարինել «2.41898 հա» արտահայտությամբ: Որոշում է մասից հետո 1-ին նախադասության մեջ «հողամասը տրամադրել օգտագործման վարձակալության իրավունքով» բառերից հետո ավելացնել «Վայոց ձոր ֆրուկտ ՍՊԸ-ին» բառերը:

2. Ողջամիտ ժամկետում ձեռնարկել օրենքով սահմանված միջոցներ սույն որոշումից բխող իրավունքի պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը «Վայոց ձոր ֆրուկտ ՍՊԸ-ին» հանձնելու համար:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱՆՏՈՆՅԱՆ ԾԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**